

РА ШИРАКИ МАРЗ  
«ДЖРАРАТСКАЯ  
СРЕДНЯЯ ШКОЛА»  
ԴՈՒՄ



RA SHIRAKI MARZ  
JRARAT SECONDARY  
SCHOOL SNPO

ՀՀ Շիրակի մարզ «Զրառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Հեռ. 093 39 85 44

ՀՀ Շիրակի մարզպետ  
պարոն Ս. Պետրոսյանին

« 21 » 05 . 2019թ.

Հարգելի պարոն մարզպետ


Համաձայն Հայաստանի Հանրապետության 2010 թվականի մարտի 4-ի N319 -Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգ»-ի 4-րդ կետի տեղեկացում էմ, որ ՀՀ Շիրակի մարզի «Զրառատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված է մրցույթ:

Կից ներկայացնում ենք խորհրդի որոշման քաղվածքը:

Առդիր՝ 1 թերթ:

ՀՀ Շիրակի մարզի «Զրառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

խորհրդի նախագահ՝  Լ. Գորգինյան



ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ Շիրակի մարզի <<Ջրառատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2019 թվականի մայիսի 21-ի նիստի թիվ 3 արձանագրությունից:

Օրակարգում. 1. ՀՀ Շիրակի մարզի <<Ջրառատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հայտարարման մասին:

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը>> հաստատելու մասին ՀՀ կառավարության 04.03.2010թ. թիվ 319-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դրույթները՝ ՀՀ Շիրակի մարզի <<Ջրառատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդ.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայտարարել մրցույթ ՀՀ Շիրակի մարզի <<Ջրառատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար:

2. Մրցույթն անցկացնել ՀՀ Շիրակի մարզի <<Ջրառատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքում՝ 2019 թվականի հուլիսի 16-ին ժամը 12<sup>00</sup>-ին:

3. Մրցույթի մասնակիցների գործերն ընդունել ՀՀ Շիրակի մարզի Ջրառատի միջնակարգ դպրոցում՝ մրցույթի մասին հայտարարության երկրորդ հրապարակման օրվանից 30 օրվա ընթացքում 08.06.2019 թ.-07.07.2019թ. ժամանակահատվածում՝ ժամը 10<sup>00</sup> -15<sup>00</sup>, բացի ոչ աշխատանքային օրերից:

4. Մրցույթ հայտարարելու մասին կառավարման խորհրդի որոշումը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետին:

5. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելուց առնվազն երկու աշխատանքային օր առաջ տեղեկատվությունը տրամադրել կրթության ոլորտի պետական լիազորված մարմնին:

6. ՁԼՄ-ներում մրցույթ հայտարարելու մասին առաջին հայտարարությունը հրապարակել 03.06.2019 թ-ին, երկրորդը՝ 08.06.2019 թ-ին:

7. Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների/ գործերի/ ընդունման պատասխանատվությունը դնել խորհրդի քարտուղարի վրա:

ՀՀ Շիրակի մարզի <<Ջրառատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման

խորհրդի նախագահ՝  Լ. Գորգինյան